



ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
RA MINISTRY OF LABOR AND SOCIAL  
ISSUES

ՀՀ ԱՄՆ «ՁԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՇԱՐՎՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ  
RA MLSI STATE EMPLOYMENT SERVICE  
AGENCY

ԱՄՆ ՄՁԳ ՀԱՅԱՍՏԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ՀՁՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ  
USAID ARMENIA, SOCIAL PROTECTION SYSTEMS  
STRENGTHENING PROJECT

ՄՊՀՀ մամլո հաղորդագրություն # [15]

Երևան, Հայաստան  
28 հոկտեմբերի, 2008թ.

**Ժապավենը կտրելու հանդիսավոր արարողությանը ազդարարվեց զբաղվածության տարածքային կենտրոնի վերաբացումը Գավառում**

**Երևան, Հայաստան** - Ս.թ. հոկտեմբերի 28-ին ժապավենը կտրելու հանդիսավոր արարողությանը ազդարարվեց Գավառում «Ձբաղվածության տարածքային կենտրոնի» վերաբացումը, որը նախատեսված է հոգալու տարածքի բնակիչների զբաղվածության կարիքները: Համայնքի 2600 գործազուրկները և 280 գործատուները կդառնան կենտրոնի առաջին հաճախորդները և վերանորոգման արդյունքներն ու մոդելային կենտրոնի ստեղծումը վայելող անմիջական շահառուները: ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեխնիկական աջակցության շնորհիվ տարածքի բնակիչներն ավելի մեծ հնարավորություններ և ավելի լավ պայմաններ կունենան վերապատրաստվելու և աշխատանք փնտրելու համար:

Հանդիսավոր արարողության պատվավոր հյուրերն էին ԱՄՆ նորանշանակ դեսպան Մարի Լ. Յովանովիչը և ԱՄՀՆ նախարար Արսեն Համբարձումյանը՝ խորհրդանշելով արգասաբեր և նպատակատուղված համագործակցությունը: Գավառում տեղի ունեցած հանդիսավոր արարողությունը վերջին ամսվա ընթացքում տեղի ունեցած երեք միջոցառումների շարքում վերջինն էր՝ նվիրված ԱՄՆ ՄՁԳ Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՄՊՀՀ) ծրագրի շրջանակներում վերանորոգված և վերակահավորված Չարենցավանի, Հրազդանի և Գավառի տարածքային կենտրոնների վերաբացմանը: Այս տարվա ընթացքում ԱՄՆ ՄՁԳ Կամուրջ ծրագրի միջոցով վերանորոգվեցին և վերաբացվեցին 5 տարածքային կենտրոններ՝ Դիլիջանում, Իջևանում, Բերդում, Ալավերդիում և Աբովյանում:

ԱՄՆ ՄՁԳ ՄՊՀՀ ծրագրի կողմից իրականացված վերանորոգման աշխատանքները միտված են աջակցելու բարելավված սոցիալական ծառայությունների մատուցմանը՝ շեշտը դնելով հասանելիության, պատասխանատվության և արհեստավարժ աշխատանքային մթնոլորտի վրա: Այս վերանորոգումը թույլ է տալիս ՁՊԾԳ-ին ստեղծել լավագույն վարչական, ընթացակարգային և տեխնոլոգիական հնարավորություններով «մոդելային կենտրոն»՝ Հայաստանի աշխատաշուկային և տեղական ընկերություններին արդյունավետորեն մատուցելու ծառայությունների լիարժեք տեսականի:

Բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց բացման խոսքում նշեցին մոդելային կենտրոնների հիմնական նպատակը, որն է՝ ստեղծել նոր եղանակներ և մոտեցումներ, որոնք զգալիորեն կարճաժամկետ շուկայի պահանջների վրա հիմնված և շուկային հարմարեցված սոցիալական պաշտպանության ու ինքնապաշտպանության համակարգին:

*ԱՄՆ ՄՁԳ Հայաստան, Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագիրը Հայաստանում խթանում է սոցիալական պաշտպանության և աշխատաշուկայի միավորված քաղաքականությունները՝ բարելաված սոցիալական ապահովագրության տրամադրման, աշխատաշուկայի բարեփոխումների իրականացման, մասնագիտական անվտանգության նորմերի ներդրման և ծառայությունների մատուցման միջոցով նվազեցնելու բնակչության խոցելի խմբերի կախվածությունը պետական աջակցությունից: 2007թ. ի վեր ՄՊՀՀ ծրագիրն իրականացվում է «ԱԵԿՈՍ միջազգային զարգացում» ընկերության կողմից (նախկինում՝ «Սրբվիսիզ գրուպի ինք.») (TSG):*